ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ

(ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)

Գրեց՝ ԱՐՏ. ԱՐԵՂԵԱՆ

IX

Հանրապետական–դաշնակցային Ռուսաստանը հայ ժողովուրդին ոչ միայն չի զրկի իր մարզկային–քաղաքացիական ազատութիւններից, որ ինքնին արդէն բարիք են, ոչ միայն նրան հնարաւորութիւն կը տայ շատ աւելի լայնօրէն զարգացնելու իր ազգային մշակոյթը — դպրոց, արուեստներ, դիտութիւն, լեզու եւ գրականութիւն — այլ անկարելի է որ նա դէթ մասամբ բաւարարութիւն չտայ, թէկուզ հէնց իր պետական սահմաններում, Հայաստանի հողային արդար պահանջներին:

Ամէն մի դաշնակցային պետական կազմ, եթէ նա կեղծ չէ Խորհրդայինի պէս, անհրաժեշտաբար պիտի առաջնորդուի երկու հիմնական սկզբունքներով — ազգային – լեզուական ու աշխարհագրա–տնտեսական:

Արդ, այդ երկու սկզբունքներն էլ խօսում են յօդուտ Հայաստանի ընդարձակման (համապետական սահմաններում):

Արդ, Լեռնային Ղարաբաղն ու Գանձակը, եւ Ախալքալաքը դերադանցօրէն հայկական են բնակչութեան ցեղային կազմով, աշխարհագրօրէն եւ տնտեսօրէն էլ անբաժան մասերն են հայկական բարձրաւանդակի: Շարուր–Նախիջեւանը եւս տնտեսօրէն Այրարատեան դաշտի մի մասնիկն է, նրանից անբաժան, որով եւ անհրաժեշտութիւն պիտի դիտուի նրա վերակցումը եւս Հայաստանին:

Եւ յիրաւի, դեմոկրատական Ռուսաստանը տակաւին իր գոյութեան արշալոյսին, 1917 թ. գարնանը, պաշտօնապէս հաւանութիւն տուաւ հայութեան հողային այդ նուազագոյն պահանջներին: Կիրեենսկիի ժամանակաւոր կառավարութիւնը միանգամայն արդարացի գտաւ Անդրկովկասի նախագծուած վարչական նոր բաժանումը, որով վերոյիշեալ գաւառները ճանաչուեցին որպէս հայկական: Թէ ինչ պատահեց այնուհետեւ, յայտնի է: Որ Ռուսաստանի ապագայ ռեւէ դեմոկրատ–դաշնակցային կառավարութիւն եւս դժուար թէ անտես անի մեր այդ պահանջները, աւելի քան հաւանական է:

Եւ այդպէս պիտի վարուի նա հարկաւ ոչ թէ մեր սիրուն աչքերի խաթեր, այլ առաջնորդուելով համապետական շահերով, որ տուեալ սահմաններում նոյնանալու են հայկական շահերի հետ: Երկրորդ նրա համար, որ հանրապետական–ազատ կարգերում, ուր պիտի իշխէ իրաւունքը եւ ազատ կամքի արտայայտութիւնը ժողովուրդների, անկարելի է դիւրութեամբ տնտատակ տալ վերջիններիս սրբազան իրաւունքները վակելով նրանց բերանը, ինչ որ բղխում է ամէն մի բռնապետական ռէժիմի էութիւնից խակ, լինի նա ցարական թէ բոլշեւիկեան:

Եւ սակայն ոչ միայն ներքին, այլ եւ արտաքին քաղաքականութիւնից դրդուած՝ հանրապետական դաշնակցային Ռուսաստանը պիտի նպաստի հայութեան եւ Հայաստանի ոտնահարուած իրաւունքները դէթ մասամբ շտկելու:

Քաղաքական մանուկների համար միայն պարզ չէ այն, որ արդի Հայաստանի հողային և ամէն կարգի զրկանքները այսօր՝ արդիւնք են նախ եւ առաջ Խորհրդային Մոսկուայի եւ Քեմալական Անգորայի բարեկամութեան, այդ երկուսի դաշնակցութեան: Այս վերջինիս զոհ բերեց Ռուսաստանը ի թիւս ուրիշ բաների նաեւ մեր հայրենիքի կենսական շահերը: Ընդհանուր թշնամու — Անգլիայի — դէմ պայքարելու, ինչպէս նաեւ «համաշխարհային հեղեղը» Ասիայում վառելու մոլուցքով տարուած՝ Մոսկուան ձեռք մեկնեց դարաւոր ոսոխին:

Որ սակայն այդ պատրանքները վաղ թէ ուշ յօդս պիտի ցնդեն, որ ապագայ ազատ Ռուսաստանը պիտի հիմնական վերաքննու–